ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

16 հուլիս 2021թ. **Ք. ԻՋԵՎԱՆ**

ՕՐԱԿԱՐԳ

1. Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանի տարեկան հաշվետվությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Ա. Աղաբաբյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ հերթական նիստում նախատեսված է 1 զեկուցվող հարց՝ համաձայն ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ .

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Նա ներկայացրեց 2020-2021 ուստարվա ընթացքում Կիրառական արվեստի ֆակուլտետում իրականացված աշխատանքները (Հաշվետվությունը կցվում է՝ **Հավելված 1**):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Ասատրյան, Հ. Մխիթարյանը, Մ. Ստեփանյանը

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանի ամփոփիչ հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

2. 2020-2021 ուստարում դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանի կողմից կատարված աշխատանքները գնահատել բավարար:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ա. Աղաբաբյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. Մխիթարյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԵՊՀ ԻՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016-2020ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ստորաբաժանման անունը_ Կիրառական արվեստի ֆակուլտետ _____
Ամսաթիվ ___16.06.2021_____

ՌՕ գործողությունը	**Ի՞նչ արդյունքներ էին ակնկալվում**	**Ի՞նչ արդյունքներ են ձեռք բերվել (նշել փաստերով, օրինակներով, նաև հիմքերով)**	**Ի՞նչ չի իրականացվել և ինչու՞**	**Ինչպե՞ս եք պլանավորել իրականացնել և ի՞նչ ժամկետներում**
1.2.2 Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման մեխանիզմը՝ կարևորելով ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը:	Դասաժամի արդյունավետ գործածություն՝ էլեկտրոնային նյութերի և տեխնոլոգիական հնարավորությունների գործածությամբ, ուսանողների ապահովվածություն անհրաժեշտ ուսումնական նյութերով, դասավանդման և ուսումնառության գործընթացի բարելավում: Պարբերական սեմինարներ՝	2020-21 ուստարվա ուսումնառությունը հիմնականում իրականացվել է հիբրիդային տարբերակով՝ պայմանավորված հանրապետությունում ստեղծված արտակարգ իրավիճակով, 44-օրյա պատերազմով: Այս առումով, իհարկե, կարևորվել են ուսուցման ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները: Հաշվի առնելով ֆակուլտետում ուսումնառության առանձնահատկու-թյունները՝ մասնագիտական առարկաների գործնական պարապմունքները հիմնականում անցկացվել են լսարանային պայմաններում, իսկ դասախոսությունները՝ Zoom հարթակում: Հնարավորինս վերանայվել են առարկայական փաթեթները, կրթական ծրագրերը, քննարկվել են	Խրախուսում չի իրականացվել, որովհետև ստեղծված իրավիճակում բավական դժվար էր ճիշտ կողմորոշվել:	Խրախուսման համար մասնաճյուղում գործում է համապատասխան կարգ, և հաջորդ ուսումնական տարում կառանձնացվեն այն դասախոսները, որոնք կհամապատասխանեն առաջադրվող պահանջներին: Մենք գտնում ենք, որ պետք է առանձնացվեն այն դասախոսները, որոնք կներկայացնեն բարեփոխումներին ուղղված առաջարկությունների փաթեթ, իրենց կողմից դասավանդվող առարկայի փաթեթը, էլեկտրոնային դասախոսությունները և

	դասավանդման փորձի փոխանակման նպատակով:	ֆակուլտետի գործունեությանը առնչվող համապատասխան կարգերն ու գործող մեխանիզմները: Ըստ անհրաժեշտության՝ առաջադրվել են ֆակուլտետի ներկայացուցիչներ: 2020-21 ուստարում ամբիոններում իրականացվել են փոխադարձ դասալսումներ, վարպետաց դասեր՝ ուսումնասիրելու դասախոսական կազմի ուսումնամեթոդական առաջավոր փորձը: Հաշվի առնելով, որ ավարտական կուրսի ուսանողների մոտ մեծ է հետաքրքրությունը հագուստի մոդելավորման նկատմամբ, նշված ուստարում երեք ավարտական աշխատանքի ղեկավարում իրականացվել է Տերյան մշակութային կենտրոնի հետ համատեղ և աշխատանքների ղեկավարումը իրականացրել է կենտրոնի ղեկավար, ա. գ. թ., դոցենտ Լիլիթ Մելիքյանը: Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ասիստենտ Մ. Ստեփանյանը 2021թ.-ին ԲՈԿ-ի կողմից ստացել են դոցենտի գիտական կոչում:		կունենան մասնագիտական որևէ պարապմունքի տեսաձայնա-գրում:

1.2.3 Կրթափորձի կարգով ներդնել գնահատման նոր մեթոդներ՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունք ների գնահատման վրա:	Ակնկալվող կրթական վերջնարդյունքն երից բխող գնահատման համակարգ: Ֆորմատիվ գնահատման մեթոդների ընդլայնված կիրառում կրթական ծրագրերում:	Ուսումնասիրվել են գործող ԿԾ վերջնարդյունքների կապը համապատասխան դասընթացների վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ: Ուսումնասիրության արդյունքում նկատելի դարձավ, որ ԿԾ վերջնարդյունքների կապը համապատասխան դասընթացների վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ այնքան էլ հստակ չեն սահմնված: Ստեղծվեցին աշխատանքային խմբեր, որոնք երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացրին նշված աշխատանքները: Արդյունքում ունեցանք «Դեկորատիվ-կիրառական արվեստի» վերանայված կրթական ծրագիր, իսկ «Դիզայն» կրթական ծրագրի աշխատանքային խումբը դեռևս վերջնական տեսքի չի բերել կատարված աշխատանքները: Ամբիոնների կողմից հնարավորինս վերանայվել են գնահատման չափանիշները և գնահատման նոր մեթոդները, որոնք արձանագրված են դասընթացների ծրագրային փաթեթներում (պորտֆոլիոներում) /Արձան. N 5	Չեն ստեղծվել մեթոդական ձեռնարկներ: «Դիզայն» կրթական ծրագրի աշխատանք ային խումբը դեռևս վերջնական տեսքի չի բերել կրթական ծրագիրը:	Ստեղծել մեթոդական ձեռնարկ ստեղծող աշխատանքային խումբ: Նախատեսում ենք մինչև ուսումնական տարվա ավարտը ունենալ «Դիզայն» մասնագիտության վերա-նայված կրթական ծրագիր:

		16.02.21թ./։ Հաշվի է առնվել նաև հետազոտական բաղադրիչ ունեցող դասընթացների գնահատման առանձնահատկությունները։ Գնահատման նոր մեթոդները կիրառվել են քննաշրջանի ընթացքում։		
1.2.4 Ուսումնասիրել դասավանդ-ման, ուսում-նառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակց-ման) ժամանա-կակից փորձը բակալավրի կրթական ծրա-գրերում կիրառելու նպատակով։	Ուսումնառության և հետազոտության ինտեգրման ծրագրերի իրականացում և արդյունքների վերլուծություն՝ ուսումնառության արդի պահանջներին համապատասխան։	Ամբիոններում հիմնականում առկա են առարկայական փաթեթներ, որոնք դեռևս վերանայման կարիք ունեն։ Նշված ժամանակահատվածում ամբիոններում ստեղծվել են աշխատանքային խմբեր՝ կրթական ծրագրերի ղեկավարների անմիջական համակարգմամբ, որպեսզի ամբիոններում բարելավման նպատակով ուսումնասիրվեն բակալավրի կրթական ծրագրերը։ Դեռևս նախորդ ուստարուց ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ հաստատվել է բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ներդրման կարգը։ Հետազոտական բաղադրիչ ունեցող դասընթացների մասնագրերում կատարվել են համապատասխան փոփոխություններ, ներառվել են որակի ապահովման գործիքների ցանկը։ Հաշվի է առնվել նաև այն	Որոշ առարկայական փաթեթներում դեռևս բացակայում են որակի ապահովման գործիքները։	Առարկայական փաթեթներում ներառել դասախոսի կողմից կիրառվող որակի ապահովման գործիքների ցանկը։

		փաստը, որ ֆակուլտետում ավելի նպատակային է ուշադրություն դարձնել ինքնուրույն և խմբային աշխատանքներին: Այս աշխատանքների համար ևս սահմանվել են գնահատման սանդղակներ, որոնք արտացոլվում են առարկայական փաթեթներում:		
1.2.6 Մշակել և ներդնել ակա-դեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ (այդ թվում՝ ավարտական աշխատանք-ների) գրա-գողությունը կանխելու նպատակով:	Քննական գործընթացների թափանցիկություն, ուսանողների գիտակցության մեջ սեփական ուժերին և կարողություններին ապավինելու հատկանիշի ձևավորում:	2020-2021 ուստարում, ելնելով համաճարակային իրավիճակից, ոչ մասնագիտական առարկաների ընթացիկ ստուգումների և քննությունների զգալի մասը անցկացվել են zoom հարթակի միջոցով՝ առցանց եղանակով: Ընդ որում, ապահովելու համար քննությունների ընթացքում ակադեմիական ազնվությունը, քննական ընթացքը տեսաձայնագրվել է և ուղարկվել ՈւՄՎ: Բոլոր առարկաների լուծարքների համար ստեղծվել են առնվազն երեք անդամներից բաղկացած հանձնաժողովներ: Ուսումնական կիսամյակների սկզբում ուսանողներին տրվել է քննական հարցաշարերը, ինքնուրույն աշխատանքի թեմատիկան, տեղեկացվել են ակադեմիական ազնվության և գնահատման կարգերի մասին: Բացի այդ՝ ուսանողների հետ		Ուստարվա ընթացքում ուսանողների հետ անցկացնել զրույցներ՝ ակադեմիական ազնվության մասին, արգելել ու կանխել մեխանիկական արտագրությունները գիտաուսումնական աղբյուրներից և ինտերնետային կայքերից:

		զրույցներ են անցկացվել ակադեմիական ազնվության մասին, կանխվել են ոչ պրոֆեսիոնալ նկարներց և գործերից արտանկարելու, ինտերնետային կայքերից, գիտաուսումնական աղբյուրներից նույնությամբ օգտվելու փորձերը։ Իրականացվել է ավարտական աշխատանքներին վերագրվող չափանիշների հետևողական վերահսկողություն։ Ֆակուլտետի առանձնահատկություններից ելնելով՝ մասնագիտական առարկաների ընթացիկ քննությունները և ստուգումները կազմակերպվել են արվեստանոցներում՝ պահպանելով անհրաժեշտ հակահամաճարակային պայմանները։ Ավարտական կուրսում հաշվետու ուսումնական տարում նաև ներդրվեց ուսանողի փաթեթները (Պորտֆոլիո), ինչը հնարավորություն է տալիս ուսանողին ներկայանալի դառնալ, նաև օգնում է դասախոսներին՝ կրկնվող նախագծերը և աշխատանքները բացառելու գործում։ Գրվել և պաշտպանության են		

		ներկայացվել գիտական տեսակետից հետաքրքրություն ներկայացնող թեմաներով հետազոտական և ավարտական աշխատանքներ, որոնցից վերջինների մասին իրենց գոհունակությունը, նաև դիտողություններն են հայտնել 2020-21 ուստարվա ավարտական ատեստավորման հանձնաժողովի նախագահը (առկա է գրավոր հաշվետվությունը): Ակադեմիական ազնվությանը նպաստել են նաև անհատական առաջադրանքների կազմումը, առանձին դասընթացների համար ամբիոնների կողմից հաստատված գնահատման ձևերը, ավարտական և հետազոտական աշխատանքներին վերագրվող չափանիշների հստակ վերահսկողությունը, ավարտական աշխատանքների համար առանձին փաթեթների կազմումը և հավաքագրումը: Քննությունների ընթացքը վերահսկվել է նաև ՈՒՄՎ տեսուչների, դեկանի և ամբիոնների վարիչների կողմից:		
1.3.2 Վերանայել և գործադրել կրթական ծրա-	Թարմացված և բարելավված կրթական ծրագրեր:	Կրթական ծրագրերի վերանայման նպատակով 2020 թ.-ի հունվարի 30-ին ստեղծվել են աշխատանքային խմբեր՝		Նախատեսում ենք սեղմ ժամկետներում ավարտին հասցնել Դիզայն կրթական

գրերի ընթա-ցիկ մշտա-դիտարկման (մոնիթորինգի) և պար-բերական վե-րանայման կարգը:	Մշտադիտարկումից և պարբերական վերանայումից բխող վերլուծություններ:	կրթական ծրագրերի ղեկավարների գլխավորությամբ, որոնցում ընդգրկվել են ամբիոնների վարիչներ, պրոֆեսորադասախոսական համակազմի անդամներ, ուսանողներ, արտաքին շահակիցներ՝ կրթական ծրագրերում լրացումներ և շտկումներ կատարելու համար (ԿԱՖ ԳԽ արձանագրություն 5): Կիսամյակի ընթացքում ֆոկուս խմբերի հետ կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ, կատարվել է հայաստանյան և արտասահմանյան մի քանի բուհերի համապատասխան կրթական ծրագրերի համեմատություններ, ներկայացվել են վերլուծություններ: Արդյունքում հիմնովին փոխվել է Դեկորատիվ-կիրառական արվեստի կրթական ծրագիրը, որը չէր վերանայվել 2013 թվականից: Այժմ նախատեսվում է նշված կրթական ծրագիրը ուղարկել արտաքին փորձաքննության: Դիզայն կրթական ծրագրի աշխատանքային խումբը մասնակի է կատարել հանձնարարված աշխատանքը:		ծրագրի վերանայման աշխատանքները: Բակալավրի կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչ ներդնելու կարգի հաստատումից հետո ամբիոններում նաև այս առումով են վերանայվում և փոփոխվում կրթական ծրագրերի մասնագրերը:

1.3. 3. Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը մասնաճյուղի բոլոր ամբիոններում:	Դասախոսական կազմի գործունեության անաչառ գնահատում:	Ամբիոնային նիստերի, հանդիպումների ժամանակ ըստ անհրաժեշտության բարձրաձայնվել են նկատված թերությունները, արվել են դիտարկումներ, քննարկվել են ուսանողների միջավայրում դասախոսների վերաբերյալ անցկացված սոցհարցումների տվյալները, արվել են հետևություններ: Քննարկումների նյութ են դարձել նաև ՄԿՈԱ բաժնի կողմից իրականացված հարցումները, որոնք վերլուծվել են, կատարվել են համապատասխան եզրահանգումներ: Բացի այդ՝ ամբիոնի վարիչների կողմից լրացվել են դասախոսների վարկանիշային թերթիկները, որտեղ հանգամանալի ներկայացված են տվյալ ուսումնական տարում դասախոսի հաջողությունները, կատարած աշխատանքը:		Ուստարվա ընթացքում ամբիոնային նիստերի, հանդիպումների ժամանակ ըստ անհրաժեշտության բարձրաձայնել նկատված թերությունները, անել դիտարկումներ, քննարկել ուսանողների միջավայրում դասախոսների վերաբերյալ անցկացված սոցհարցումների տվյալները, անել հետևություններ:

1.3.5 Նախաձեռնել և իրականացնել ինքնագնահատման ինստիտուցիոնալ գործընթաց:	Գործունեության թույլ կողմերի վերանայումն ու շտկումը:	Նախատեսվում էր այս խնդրով զբաղվել դեռևս 2019-20 ուստարում, սակայն ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ քայլեր չեն ձեռնարկվել:		Հարկավոր է ամբիոններից հավաքագրել առաջարկներ և դրանց քննարկման միջոցով որոշել այն չափանիշները, ըստ որոնց պիտի կատարվի ինքնագնահատումը: Այդ չափանիշները ներկայացնել գիտխորհրդի հաստատմանը (հաջորդ ուստարի):
1.4.1 Ներդնել ԵՊՀ-ում մշակված վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառու-թյան ռեսուրս-ների առցանց մատուցման համար:	Ժամանակակից առցանց հնարավորություն-ների կիրառությունը ուսուցման գործընթացում:	Կորոնավիրուսի համաճարակի պատճառով հանրապետությունում ստեղծված արտակարգ իրավիճակի պատճառով անցում կատարվեց առցանց ուսուցման, ընդ որում ընտրվեց միասնական zoom հարթակ, որպեսզի դասապրոցեսը լինի վերահսկելի՝ հստակ դասացուցակով: Պետք է նշել, որ ֆակուլտետի դասախոսական համակազմի հիմնական մասը բավական արագ կարողացավ հարմարվել ստեղծված նոր իրավիճակին, և ընդհանուր առմամբ մեծ ձախողումներ չեղան: Այնուամենայնիվ, նկատվեց, որ մասնագիտության առանձնահատկություններից		

		ելնելով, դժվարություններ են նկատվում գործնական պարապմունքների ընթացքում և որոշվեց գործնական պարապմունքները իրականացնել լսարանային պայմաններում՝ պահպանելով հակահամաճարակային պայմանները, իսկ դասախոսությունները՝ առցանց:		
1.4. 2. Ձևավորել անհրաժեշտ տեխ-նոլոգիական և մեթոդական հենք՝ ուսում-նառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման և ներդրման հա-մար:	Ուսումնառության էլեկտրոնային մշակված ռեսուրսների ներդրում:	Մասնաճյուղում ներդրվել է վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրո-նային համակարգ (ZOOM), որի միջոցով առցանց՝ հեռավար եղանակով հիմնականում իրականացվել են դասընթացները: Բացի այդ՝ զգալի ժամաքանակ հատկացված է «Համակարգչային գրաֆիկա» և «Եռաչափ մոդելավորում» առարկաների մոդուլներին ու ուսանողների զգալի մասը հնարավորություն չունեին տնային պայմաններում ունենալ անհրաժեշտ ծրագրերը, ուստի ուսանողները առցանց դասընթացները իրականացնում էին համալսարանի համակարգչային սրահներում: Հաճախ դասերից հետո շարունակվում էր աշխատանքները՝ որպես ուղեցույց օգտվելով դասավանդողների կողմից		«Համակարգչային գրաֆիկա» և «Եռաչափ մոդելավորում» առարկաների դասախոսներին հանձնարարել ստեղծել էլեկտրոնային մշակված ռեսուրսներ:

		մշակված անհրաժեշտ մեթոդական նյութերից:		
1.4.3 Վերապատ-րաստել դասա-խոսական կազմը ուսում-նառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար:	Դասավանդման ժամանակ էլեկտրոնային ռեսուրսների կիրառություն: Դասապրոցեսի արդյունավետ կազմակերպում :	Ամբիոնների դասախոսներից երեքը՝ Ք. Մխիթարյանը, Ա. Չիբուխչյանը և Դ. Չիբուխչյանը, տարբեր ժամանակահատվածներում մասնակցել են էլեկտրոնային ռեսուրսների կիրառությամբ առանձին վերապատրաստման դասընթացների («Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ» մոդուլում ներառված «Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում», «Համակցված դասավանդում և ուսուցում», «Ինչպե՞ս օգտագործել Google forms ձևաչափի հնարավորություններն առցանց քննությունների համար», «Ինչպե՞ս օգտագործել Google Apps գործիքների հնարավորությունները») :		Ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման հնարքներին, Google Apps գործիքներին տիրապետելու և դրանք գործածելու նպատակով մասնաճյուղում կազմակերպվել է դասընթաց՝ «Ինչպե՞ս օգտագործել Google Apps գործիքների հնարավորությունները» վերնագրով: Ֆակուլտետի որոշ դասախոսներ դասընթացից ձեռք բերած գիտելիքները կիրառել են դասավանդման և գնահատման գործընթացում:
1.4.5 Ապահով-ել կրթական ծրագրերը ուսումնառու-թյան էլեկտրոնային ռեսուրսներով:	Կրթական ծրագրերի ապահովվածություն էլեկտրոնային ռեսուրսներով՝ ուսումնառության գործընթացի	Ֆակուլտետի համակարգչային սրահը հիմնականում համապատասխանում է կրթական ծրագրերի պահանջներին: Անընդհատ թարմացվում են անհրաժեշտ ծրագրերը, ավելացվում են նոր էլեկտրոնային ռեսուրսներով:		Գործընթացը շարունակական բնույթ է կրում, և կրթական ծրագրերը համալրվում են նոր էլեկտրոնային ռեսուրսներով: Առաջնահերթություն ենք համարում

	արդյունավետ կազմակերպման համար:	Կրթական ծրագրերի համար մշակվել են առարկայական էլեկտրոնային տարբերակներ (դասախոսություններ, առաջադրանքներ, ինքնուրույն հանձնարարականների թեմաներ, հարցաշարեր, օժանդակ նյութեր, գրականության ցանկ ևն), որոնք գործառության մեջ են դրվել և հասանելի են եղել ուսանողներին, երբ անցում է կատարվել առցանց ուսուցման:		«Համակարգչային գրաֆիկա» և «Եռաչափ մոդելավորում» առարկաների մեթոդական ձեռնարկների ստեղծումը:
1.4.7 Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները:	Արդի պահանջներին համապատասխանող առցանց եղանակով իրականացվող ուսուցում:	Համաճարակային իրավիճակից ելնելով՝ գրեթե բոլոր դասախոսություններն իրականացվեցին առցանց եղանակով: Սա առաջին քայլն էր և փորձը արդի ուսումնառության պահանջներին համապատասխան առցանց ուսուցում իրականացնելու ճանապարհին:	Դեռևս չկա առցանց ուսուցման մշակված կանոնակարգ:	Այս խնդիրն իրականացնելու համար դասախոսների վերապատրաստումը շարունակական բնույթ է կրում:
2.1.3 Ակտիվացնել և խրախուսել ՈՒԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կատարումը և ղեկավարումը:	Ուսանողների մեջ հետաքրքրության առաջացում հետազոտական աշխատանքի նկատմամբ: Ուսանողների կողմից իրականացվող հետազոտությունների ծավալի	Ֆակուլտետի ամբիոնները հետազոտական աշխատանք կատարելիս ուղղորդել և ղեկավարել են ուսանողներին: Հաջողության հասնելու համար կարևոր էր նաև ընտրված թիմը: Ընթացիկ ուսումնական տարում ֆակուլտետի ՈՒԳԸ-ն իրականացրել է մի շարք ֆակուլտետային և համամասնաճյուղային միջոցառումներ: Դրանցից		Մեծացնել ուսանողների ընդգրկվածությունը ՈՒԳԸ աշխատանքներում: Ամբիոնի դասախոսների կողմից իրականացվող հետազոտություններում ընդգրկել նաև լավագույն ուսանողներին:

	մեծացում և գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածություն:	կարևորում ենք հայտարարված լոգոների մրցույթը: Մրցույթի նպատակն էր զարգացնել ուսանողների ստեղծագործական միտքը: Մրցութային հանձնաժողովի կողմից ընտրվել է լավագույն լոգոն, իսկ հաղթողը՝ պարգևատրվել: ՈՒԳԸ- ի կողմից կազմակերպվել է դասընթաց-սեմինարներ, որի մասին ներկայացվել է հաշվետվություն:		
2.1.4 Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրի կրթական ծրագրերում:	Բակալավրի կրթական ծրագրերում բարելավված հետազոտական բաղադրիչի առկայությունը:	Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում դասավանդվել է հետազոտական բաղադրիչ ունեցող վեց դասընթաց՝ Զարդարվեստի կոմպոզիցիա-2, Դիզայնի պատմություն, Դիզայն նախագծում -1, Նախագծում -6, Աշխատանք նյութի վրա /Գործվածքի գեղարվեստական ձևավորում/-3, Դիզայն նախագծում -2: Հետազոտական աշխատանքների թեմաները բխում էին մասնագիտական հետաքրքրություններից: Մի փոքր դժվարություններ ներկայացրեց վերլուծությունների փուլը, քանի որ ուսանողները նմանատիպ աշխատանք կատարում էին առաջին անգամ: Հարկ է նշել, որ ուսանող-դասախոս-ամբիոն համագործակցության		Այս գործընթացը ենթակա է մշտադիտարկման, քանի որ հետազոտական բաղադրիչը տարբեր դասընթացներում կիրառվում էր առաջին անգամ, և հարկավոր էր հասկանալ՝ ճի՞շտ է որոշվել դասընթացը, թե ոչ, որո՞նք են ուժեղ և թույլ կողմերը և այլն: Անհրաժեշտ է կարևորել հետազոտական աշխատանքների թեմատիկան: Յուրաքանչյուր կիսամյակի համար ընտրել թեմատիկ առաջնահերթություններ և կարևորել

		արդյունքում բավականին հաջողված հետազոտություններ իրականացվեց:		կատարված ուսումնասիրության ինքնուրույնությունը:
2.2.2 Նախաձեռնել համագործակցային ծրագրեր տարածաշրջանային բուհերի հետ և դրանցում ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին:	Համատեղ իրականացված ծրագրեր:	Այս հարցում պետք է նշել տնօրենի և ԱԿ բաժնի օժանդակությունը: 2021թ. ապրիլի 23-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ այցելեցին «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչները՝ ռեկտորի պաշտոնակատար, ֆ.մ.գ.թ., դոցենտ Երվանդ Սերոբյանը, Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ, բ.գ.թ., դոցենտ Նազելի Ավետիսյանը, Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն, բ.գ.թ., դոցենտ Հովիկ Մելքոնյանը, Արվեստի ամբիոնի վարիչ, մ.գ.թ. Օֆելյա Կուրազյանը, այլ աշխատակիցներ, ուսանողներ: Այցելության նպատակն էր մոտիկից ծանոթանալ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գործունեությանը, խորացնել և զարգացնել երկու բուհերի միջև համագործակցությունը, համատեղ ծրագրերի		Մի քանի բուհերի հետ կնքվել է համագործակցության հուշագրեր՝ փոխադարձ աջակցության, համատեղ իրականացվող ծրագրերի վերաբերյալ: Համաճարակային վիճակի կարգավորումից հետո նախատեսվում է այդ ամենը կյանքի կոչել:

		իրականացումը: Հյուրերի պատվին ԵՊՀ ԻՄ-ում կազմակերպվել էր ցուցահանդես, որտեղ ներկայացված էին Կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների և ուսանողների վառ ու հետաքրքիր աշխատանքները: Ցուցադրված աշխատանքները դիտելուց հետո ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների և դասախոսների համար 19-րդ դարի ռուս գեղանկարչության վերաբերյալ հետաքրքիր ակնարկային դասախոսությամբ հանդես եկավ Շիրակի պետական համալսարանի արվեստի ամբիոնի դոցենտ, արվեստագիտության թեկնածու Արաքս Մարգարյանը:		
2.2.3 Նախաձեռնել տարածաշրջանի ձեռնարկությունների կարիքներին համապատասխան և նրանց մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրեր:	Տարածաշրջանի՝ հետազոտական և կրթական ծրագրերում ներգրավված ձեռնարկություններ:	Այս առումով որևէ էական քայլ չի կատարվել: Մասնաճյուղում ստեղծվել է «Տավուշ» հետազոտական կենտրոն, որի հետազոտությունների շրջանակը, ըստ տարածաշրջանի կարիքների, որոշելու համար առաջարկ է արվել նաև ֆակուլտետի ամբիոններին:		Շարունակական գործընթաց է:

3.2.2 Մշակել լրացուցիչ կրթության հայեցա-կարգ՝ ԵՊՀ-ում գործող ծրագրերը օգտագործե-լու և մասնաճյուղի համար մրցունակ ծրագրեր պատրաստե-լու ուղղությամբ:	Մրցունակ ծրագրերի առկայություն՝ ըստ արդի կարիքների:	Այս ուղղությամբ ընթացիկ ուսումնական տարում որևէ բան չի ձեռնարկվել:		Շարունակական գործընթաց է:
3.2.3 Մշակել տարա-ծաշրջանի հանրային պահանջարկին համա-պատասխան լրացու-ցիչ կրթության նոր ծրագրեր՝ ընդլայնելով պետական ու մասնավոր կազմակերպու-թյունների հետ գործ-ընկերա-յին կապերը:	Տարածաշրջանի հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթական նոր ծրագրեր:	Ամբիոններում պրակտիկաների (մանկավարժական, ուսումնական, արտադրական) ղեկավարների կողմից մշակվել են ծրագրեր, որոնք իրականացնելու համար ԱԿ և ՄԿՊԿ բաժնի կողմից կնքվել են համագործակցային պայմանագրեր դպրոցների և տարբեր կազմակերպությունների հետ՝ լրացուցիչ ծառայություններ տրամադրելու և համագործակցելու համար: 2021թ. մայիսի 17-ին Կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսները, II և III կուրսի ուսանողները ճանաչողական այց կատարեցին Կողբի գեղարվեստի դպրոց:		

		Այցի նպատակն էր ծանոթանալ դպրոցի ստեղծագործական անձնակազմին, կատարվող աշխատանքներին, քննարկել համատեղ ծրագրեր: Այցի ընթացքում ուսանողները շրջեցին արվեստանոցներում, ցուցասրահներում, ծանոթացան կատարված աշխատանքներին: Այնուհետև դպրոցի նկարիչ-մանկավարժ **Արա Ղուլիջանյան ը** դասախոսություն կարդաց համակարգչային ZBrush ծրագրի հիմնական գործիքների, հնարավորությունների և կիրառման առանձնահատկությունների մասին: Դասախոսությունը հագեցած էր և հետաքրքիր: Ժամանակի սղության պատճառով հնարավոր չէր ամբողջական պատկերացում կազմել ծրագրի հնարավորությունների մասին: Պայմանավորվածություն ձեռք բերվեց հանդիպումները դարձնել շարունակական՝ հետաքրքրվողների համար կազմակերպելով գործնական ուսուցման դասեր: 2021թ. ապրիլի 16-ին ԵՊՀ ԻՄ-ի «Տավուշ» հետազոտական կենտրոնի և «Ավանդույթ» թիվ 2 երաժշտական		

		դպրոցի համատեղ ջանքերով տեղի ունեցավ Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվան նվիրված ճանաչողական միջոցառում: Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվան ընդառաջ բանախոսներ Վ. Աղաբաբյանը և Տ. Բագամյանը ներկայացրեցին քանդակագործության պատմությունը, քանդակների դերն ու նշանակությունը: Անդրադարձ կատարվեց նաև տոնի նախապատմությանը:		
4.1.2.Մշակել դասախոսական կազմի համալրման և կատա-ռելագործման երկա-ռաժամկետ ծրագիրը, համաձայն որի՝ կատարելագործել դասախոսների պաշտոնների տեղա-կալման չափորոշիչ-ները և գործընթացնե-	Դասախոսների պաշտոնների տեղակալման չափորոշիչների և գործընթացների վերանայում, հիմնական դասախոսական կազմի՝ որակավորման բարձրացման կրթական ծրագրերին պարտադիր և լիարժեք մասնակցություն:	Դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի շրջանակներում ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար **Վահան Աղաբաբյանը** մասնակցել է **8** դասընթացի՝«Անգլերենը ակադեմիական միջավայրում», «Համագործակցային ակտիվ ուսուցում լսարանում», «Աղետների ռիսկերի կառավարում», «Ուսուցման կազմակերպումը Google Apps-ի և նրա գործիքակազմի օգնությամբ», «Հաղորդակցության դիվանագիտություն», «Համակցված դասավանդում և ուսուցում», «Ինչպես օգտագործել Google Forms ձևաչափի	Դասախոսական կազմի համալրման ծրագիր չի մշակվել դրա անհրաժեշտության բացակայության պատճառով:	Անորոշ է:

ը, ապահովել հիմնա-կան դասախոսակա ն կազմի պարտադիր և լիարժեք մասնակցու-թյունը որակավորման բարձ-րացման կրթական ծրագրերին:		հնարավորությունները առցանց քննությունների համար», «Ակտիվ ուսուցում և թվային տեխնոլոգիաները դասավանդման գործընթացում, մոբայլ ուսումնառություն և խաղայնացում»: «Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի ասիստենք **Քրիստինե Մխիթարյանը մասնակցել է 7** դասընթացի՝ «Համագործակցային ակտիվ ուսուցումը լսարանում», «Համակցված դասավանդում և ուսուցում», «Անգլերենը ակադեմիական միջավայրում», «Ինչպես օգտագործել Google forms ձևաչափը», «Ակտիվ ուսուցում և թվային տեխնոլոգիանները դասավանդման գործընթացում՝ մոբայլ ուսումնառություն և խաղայնացում», «Աշխատանքը ZOOM հարթակում», «Տեսանյութերը որպես դասավանդման գործիք»: Նույն ամբիոնի ասիստենտներ Անուշ Չիբուխչյանը և Դոնարա Չիբուխչյանը մասնակցել են «Համակցված դասավանդում և ուսուցում» դասընթացին:		
4.1. 4. Սահմա նել կրթական ծրագրերին	Կրթական ծրագրի վերջնարդյունքն	Կրթական ծրագրերի մաս-նագրերում դրվել են համապա-տասխան պահանջներ, որոնցով		Ուսումնական տարվա ընթացքում կրթական ծրագրերի մաս-

հա-մապատասխան դասախոսական կազմի մաս-նագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջ-նարդյունք-ների:	երի և դրանց համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների ձևավորում:	նաև առաջնորդվել է ամբիոնը՝ յուրաքանչյուր դասախոսին տվյալ առարկայով ծանրաբեռնելիս:		նագրերում դնել համա-պատասխան պահանջ-ներ, որոնցով պետք է առաջնորդվի ամբիոնի յուրաքանչյուր դասախոս տվյալ առարկայով ծանրաբեռնվելիս:
4.3.1 Զարգացնել դասախոսների տարբերակված հավելավճարի մեխանիզմը:	Տարբերակված հավելավճար՝ ըստ դասախոսական տարակարգերի: Տարբերակված հավելավճարի չափանիշների ճշգրտում և հաշվեկշռի ավելացում:	Ընթացիկ ուսումնական տարվա մեջ դասախոսները չեն ունեցել տարբերակված հավելավճար, քանի որ չկան ճշգրտված չափանիշներ:		Կայուն ֆինանսական հաշվեկշիռ ունենալու պարագայում կարելի է առաջարկներ ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդին՝ տարբերակված հավելավճարի մեխանիզմ ձևավորելու վերաբերյալ:
4.3.2 Մշակել վարչական և ուսում-նա-օժանդակ աշ-խատողների տարբերակված հավելավճարի չափանիշներ և	Տարբերակված չափանիշների առկայություն և գիտխորհրդի կողմից հաս-տատված կարգ:	Այս ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել:		Կայուն ֆինանսական հաշվեկշիռ ունենալու պարագայում կարելի է առաջարկներ ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդին՝ տարբերակված

համապա-տասխան կարգ:				հավելավճարի մեխանիզմ ձևավորելու վերաբերյալ:
4.3.3 Բարձրացնել աշխատողների հիմնական աշ-խատավարձը՝ հաշվի առնելով ՀՀ գնաճի տեմ-պերը՝ ըստ պաշտոնական վիճակագրու-թյան:	Աշխատավարձ-ի և գնաճի տեմպերի բալանսի պահպանում:	Ընթացիկ տարում մի փոքր բարձրացվել է աշխատողների աշխատավարձը՝ մասնաճյուղի բյուջեի հնարավորության սահմաններում:		Տևական ժամանակ է մասնաճյուղի ուսանողների ուսման վարձերը մնում է անփոփոխ՝ չնայած երկրում նկատվող էական թանկացումներին: Ստեղծված իրավիճակում բավականին դժվար է աշխատավարձի էական բարձրացումը:
4.3.4 Ներդնել սոցիալական աջակցության ծրագրեր:	Սոցիալական ծրագրերի հաստատված ցանկ և բյուջեի համապատասխան հոդված՝ աշխատակիցնե-րին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով:	Աշխատակիցներին աջակցություն ցուցաբերելու համար ֆակուլտետում համապատասխան տվյալներ են հավաքագրվում, սակայն սոցիալական աջակցության ծրագրեր մշակված չեն:		Պլանավորվում է զբաղվել հաջորդ ուսումնական տարում:
4.3.5 Զար-գացնել սոցիա-լական ենթակա-ռուցվածքը, բա-	Բարելավված ենթակառուց-վածքների առկայություն:	Ֆակուլտետում կան տարածքի տնտեսական որոշ խնդիրներ (վերանորոգման ենթակա արվեստանոցներ, պահասենյակ): Կարիք կա		Առաջարկել մասնաճյուղի տնօրենությանը առաջիկա վերանորոգման

բելավել հասա- բակական սննդի կետերի պայմանները, ապահովել ԵՊՀ հանգստի և մարզաառող- ջարանային բազաների մատչելիություն- ը մասնաճյուղի բոլոր աշ- խատողների և սովորողների համար:		ստեղծել բարելավված պահասենյակ (որտեղ կպահպանվեն ավարտական աշխատանքները) և ցուցասրահ: Հուսով ենք, որ մասնաճյուղի ղեկավարությունը առաջիկա վերանորոգման ծրագրում հնարավորինս լուծում կտա նշված հարցերին: Մասնաճյուղը հասարակական սննդի իր սեփական կետերը չունի: Ուսանողներն ու աշխատակիցներն օգտվում են կից գտնվող կետերից, որը բավականին հեռու է գտնվում ֆակուլտետից և անհարմարություններ է առաջացնում: Բուժկետի տեղակայման վայրը ևս հեռու է և հարկ եղած դեպքում ստիպված պետք է սպասել: Մասնաճյուղի աշխատակիցները Արհմիության միջոցով հնարավորություն ունեն մատչելի հիմունքներով օգտվելու ԵՊՀ մարզաառողջարանային բազաներից:		պլաններում ընդգրկել արվեստանոցների վերանորոգման հարցը:
5.1.1 Կրթական ծրագրերի պահանջներից ելնելով՝	Տեխնոլոգիապես վերազինված ուսումնական տարածքների	Ֆակուլտետն ունի 1 լսարան, գծանկարի և գունանկարի 4, հագուստի նախագծման և մոդելավորման, տեքստիլի,		Առաջարկել հաջորդ ուստարվա ծախսերում նախատեսել բրուտի հաստոցի և դիզայն

տեխնոլոգիապ ես վերազինել առկա լսարան-ներն ու ուսումնական լաբորատո-ռիաները, ձևավորել նորերը:	առկայություն:	դիզայնի, փայտի, խեցեգործության և քանդակի մեկական արվեստանոց, որոնք մասամբ կահավորված են: Առկա է կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան համակարգչային սրահ, պրոեկտորով կահավորված արվեստանոց: Ցանկալի կլիներ ունենալ դիզայն լաբորատորիա՝ ելնելով կրթական ծրագրի պահանջներից: Չնայած խեցեգործություն առարկայի փոքր ժամաքանակին՝ նպատակահարմար է ձեռք բերել բրուտի հաստոց:		լաբորատորիայի համար անհրաժեշտ միջոցներ:
6.1.2 Զարգացնել ուսանողներին մատուցվող խորհրդատվակ ան և լրացուցիչ կրթական ծա-ռայություն-ները:	Ուսանողներին մատուցվող խորհրդատվակ ան և լրացուցիչ կրթական բարելավված ծառայությունն ե ր:	Ֆակուլտետի ամբիոններից յուրաքանչյուրում ուսումնական տարվա I և II կիսամյակների համար կազմվել են խորհրդատվության գրաֆիկներ՝ ըստ առանձին դասընթացների և դրանք վարող դասախոսների, ինչպես նաև հետազոտական աշխատանքների և ավարտական աշխատանքների ղեկավարման համար, որոնց մասին ուսանողներն իրազեկվել են:		

6.1. 1. Վերհան ել ուսանողների կրթական և այլ կարիքները և գնահատել նրանց բավա-բարվա-ծությունը մատուցվող ծառայություն-ներից:	Կրթական միջավայրի բարելավում:	Ֆակուլտետը նշված խնդիրը իրագործելու համար սերտ համագործակցում է ՄԿՈԱ բաժնի հետ: Իրականացվում են ուսանողական հարցումներ մասնաճյուղից բավարարվածության, հետազոտական աշխատանքների իրականացումից բավարարվածության, իսկ շրջանավարտները մասնակցում են ստացած կրթությունից բավարարվածության հարցմանը: Ստացված արդյունքները մշակվում են ՄԿՈԱ բաժնի կողմից և հրապարակվում մասնաճյուղի կայքէջում:		Շարունակական գործընթաց է: Հարցաշարերը գնալով լավարկվում են: Ֆակուլտետի բարձր գնահատականները հիմք են տալիս դրական եզրահանգումների:
6.1.2 Զարգացնել ուսանողներին մատուցվող խորհրդատվակ ան և լրացուցիչ կրթական ծա-ռայություն-ները:	Ուսանողներին խորհրդատվութ յան և լրացուցիչ կրթական ծառայություններ ի արդյունավետ մատուցում:	Ամբիոնների կողմից կազմել է ավարտական աշխատանքների և հետազոտական աշխատանքների խորհրդատվության, ինչպես նաև դասընթացների համար լրացուցիչ պարապմունքների ժամանակացույցներ: Ըստ հաստատված ժամանակացույցների՝ ամբիոնը կազմակերպում և հետևում է իրականացվող աշխատանքներին: Հարցի վերաբերյալ առկա են ամբիոնի արձանագրությունները և հաշվետվությունները:		Շարունակական գործընթաց է:

6.1.4Բազմազանեցնել մարզամշակութային ծրագրերը, զարգացնել ուսանողական ակումբային համակարգը՝ շեշտադրելով ինտելեկտուալ, բնապահպանական, երկրագիտական և հայրենաճանաչողական բնույթի միջոցառումները:	Ուսանողական ակումբների արդյունավետ գործունեություն, բազմազան մարզամշակութային ծրագրեր, ուսանողական առօրյայի աշխուժացում:	Ընթացիկ տարում ֆակուլտետում կազմակերպվել են ինտելեկտուալ, հայրենաճանաչողական, գրական-գեղարվեստական բնույթի միջոցառումներ: Կատարված աշխատանքների մասին ուսանողական կառույցները հաշվետվություններ են ներկայացրել ֆակուլտետի գիտական խորհրդում: Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել և իրականացրել է մի շարք միջոցառումներ. 1. Լոգոների մրցույթ, որի նպատակն էր զարգացնել ուսանողների ստեղծագործական միտքը: 2. Ճանաչողական այց Կողբի գեղարվեստի դպրոց: Արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց հետագա համագործակցության: Այժմ ֆակուլտետի ուսանողները անվճար հիմունքներով մասնակցում են Կողբի գեղարվեստի դպրոցի կազմակերպած մեկամսյա պլեներ-ճամբարին: 3. Կինոդիտումներ 4. Դասընթաց- սեմինարներ Հաշվետու ժամանակահատվածում կարևոր		Հնարավորինս աջակցել ուսանողական կառույցների կայացմանը: Մասնակցել նրանց կողմից կազմակերպված միջոցառումներին:

		դերակատարություն է ունեցել նաև ֆակուլտետի Ուսանողական խորհուրդը։ Նրանց կողմից կազմակերպվել և իրականացվել են. 1. Բացօդյա ցուցահանդես 2. Կինոդիտում 3. Ցուցադրություններ և ներկայացումներ՝ անվանի նկարիչների և արվեստագետների կյանքին և ստեղծագործական ուղուն նվիրված։		
6.1.6 Խթանել ուսանողների կարիերայի ծառայություն-ները՝ զարգացնելով լրացուցիչ պրակտիկայի (ինտերնշիփ), խորհրդա-տվության և ուսուցողական դասընթացների համակարգը։	Լրացուցիչ պրակտիկայի արդյունավետ համակարգ։	«Դեկորատիվ-կիրառական արվեստ և դիզայն» ամբիոնի ասիստենտ Ք. Մխիթարյանի նախաձեռնությամբ «Դիզայն» կրթական ծրագրի ուսանողները հանդիպումներ են ունեցել Իջևան քաղաքի մի քանի կահույք արտադրողների հետ, քննարկել նախագծերը, լսել գործատուների առաջարկությունները։ Բացի այդ՝ ուսանողները պարբերաբար մասնագիտական քննարկումներ են ունեցել մարզպետարանում՝ մարզի գլխավոր ճարտարապետ Մ. Մելքումյանի ղեկավարությամբ։		Առաջարկությունների հիման վրա նախատեսվում է առարկայական ծրագրերում կատարել փոփոխություններ։
6.1.7 Նպաստել ուսանողների ձեռներեցու-թյան	Ուսանողների ձեռներեցու-թյան հմտությունների	Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է մի շարք ցուցահանդես վաճառքներ, որոնց		Ավելի մեծ ուշադրություն դարձնել տարբեր ՀԿ-ների հետ աշխատանքին և

հմտություն-ների զարգացմանն ուղղված ծառայու-թյունների կայացմանը:	զարգացմանն ուղղված ծառայություններ ի տրամադրում:	հասույթը ամբողջությամբ ուղղվել է բանակին: Ուսումնական տարվա ավարտին ևս կազմակերպվեց հետաքրքիր միջոցառում՝ «Գեղանկարչության բաց դաս Քանդակների այգում», որը նախաձեռնվել էր «Ռեստարտ Իջևան»-ի և Terlemezyan Gallery-ի մի խումբ ուսանողների հետ համագործակցության արդյունքում: Միջոցառման շրջանակներում ֆակուլտետի ուսանողները նկարեցին տավուշյան բնաշխարը, հրավիրյալ ուսանողների հետ կիսվեցին փորձով, Միջոցառման ընթացքում նկարված բոլոր նկարները կդրվեն վաճառքի, իսկ ողջ հասույթը ուղղվելու է ֆակուլտետի մասնագիտական լսարաններից մեկի վերանորոգման աշխատանքներին:		պարբերաբար ուսանողներին ուղղորդել նման ծառայություններ մատուցող ընկերությունների հետ աշխատելու:
6.1.10 Ապահովել շրջանա-վարտների հետ մասնաճյուղի և առանձին ֆակուլ-տետների շարունակա-կան կապը և խթանել շրջա-	Ֆակուլտետի աշխատակազմ ի համալրումը նոր կադրերով, շրջանավարտն երի կողմից աջակցություն ունենալը:	Ֆակուլտետը մշտապես պահում է կապը իր շրջանավարտների հետ: Այդ հարցում զգալի դերակատարում ունի նաև Կարիերայի կենտրոնը: Ֆակուլտետի շատ շրջանավարտներ համալրել են և համալրում են մեր աշխատակիցների շարքերը:	Շրջանավար տների կողմից դեռևս բացակայում է աջակ-ցության որևէ նախաձեռնու թյուն:	Շարունակական գործընթաց է:

նավարտների կողմից Մասնաճյուղին տարաբնույթ աջակցության նախաձեռնու-թյունները:				
6.2.2 Կազմակերպել ուսանողական կազմակերպու-թ-յունների ինստիտու-ցիոնալ զարգացմանը նպաստող և ուսանողների առաջնորդու-թյանն աջակցող ուսուցողական դասընթացներ:	Ուսանողների համար առաջնորդության դասընթացների համակարգ:	ՈւԽ-ն պարբերաբար նախաձեռնում է առաջնորդությունը խթանող միջոցառումներ, որոնց ֆակուլտետը մշտապես պատրաստ է աջակցելու: Բացի այդ՝ ֆակուլտետը օժանդակում է այն ուսանողներին, որոնք մասնակցում են ուսանողների առաջնորդության աջակցմանը և ուսանողական կազմակերպությունների զարգացմանը նպաստող դասընթացներին:		Կարիերայի կենտրոնի հետ համատեղ նախատեսում ենք հանդիպումներ կազմակերպել մարզի գործատուների հետ:
6.2.3 Խթանել մասնաճյուղի ուսանողական կազմակերպու-թյունների ներհանրապե-տական և միջազգային համագործակ-ցությունը:	Համատեղ իրականացվող ծրագրեր:	ՈւԽ-ը և ՈւԳՀ-ը բավական անկախ և ինքնաբավ կառույցներ են, սակայն հարկ եղած դեպքում ֆակուլտետը միշտ պատրաստ է օժանդակելու նրանց նախաձեռնած խելամիտ ծրագրերին:	Այս պահին ֆակուլտետի ՈւԽ-ն և ՈւԳՀ-ն որևէ ներհանրապե տական և միջազգային համագործակ ցություն չունի:	Նման ծրագրեր լինելու դեպքում իրազեկել և ուսանողական կառույցներին աջակցել կապերի ստեղծման գործում:

6.2.4 Նպաստել ուսանողների հետա-զոտական աշխատանք-ները խթանող ՈԻԳԸ ծրագրե-րի արդ-յունավետության բարձրաց-մանը:	Ուսանողներին ներգրավել հետազոտական աշխատանքներում: Ուսանողների ակտիվ մասնակցություն ՈԻԳԸ ծրագրերին:	ՈԻԳԸ նախաձեռնություններում ուսանողների մասնակցությանը մշտապես օժանդակել են ֆակուլտետի ամբիոնների աշխատակիցները: ՈԻԳԸ-ի կողմից ստեղծվել են մի շարք ակումբներ, որոնց կազմում ընդգրկված են նաև ֆակուլտետի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները և նրանց կողմից պատրաստվող նյութերի և հետազոտական աշխատանքները մշտապես գտնվում են ամբիոնների ուշադրության կենտրոնում:		Ստեղծել նպաստավոր պայմաններ, որպեսզի ավելի մեծ թվով ուսանողներ ցանկություն ունենան ընդգրկվելու հետազոտական աշխատանքներում:
7.1.2 Զարգացնել դիմորդների մասնագիտակ ան կողմնորոշման համար մասնաճյուղի կանքէջը:	Ֆակուլտետի մասին ամբողջական տեղեկատվությ ան տրամադրում մասնաճյուղի կայքէջում՝ դիմորդների մասնագիատակ ան կողմնորոշման համար:	Մասնագիտական կողմնորոշման շրջանակներում ընթացիկ տարում կատարված աշխատանքները մանրամասնորեն լուսաբանվել են ԵՊՀ կայքէջում:		

7.1.2 Զարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար մասնաճյուղի կայքէջը:	Մշտապես թարմացվող տեղեկատվական համակարգ բակալավրիատի դիմորդների համար:	2020-2021 ուստարվա ընթացքում ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանի կողմից մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ են եղել Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի ավելի քան 60 դպրոցներում:		Շարունակական գործընթաց է:
7.1.3 ԵՊՀ-ի հետ համատեղ Տավուշի մարզի դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով ամենամյա օլիմպիադաներ անցկացնել մասնաճյուղում՝ 2 փուլով՝ ընդլայնելով մասնակիցների շրջանակը:	Դիմորդների շրջանում Մասնաճյուղի հանդեպ մեծացնել հատաքրքրությունը:	2021 թ.-ի մարտի 14-ին ԵՊՀ ԻՄ-ում պիտի կայանար հանրակրթական տարբեր առարկաների գծով ԵՊՀ-ի կողմից կազմակերպված դպրոցական օլիմպիադայի I փուլը՝ Տավուշի մարզի դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար, սակայն արտակարգ դրության հայտարարման, ապա եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով այն տեղի չունեցավ:		Ամենամյա գործընթաց է, որին մշտապես մասնակցում են ֆակուլտետի տարբեր ամբիոնների դասախոսներ:
7.1.4 Ավագ դպրոցների և քոլեջների համար կազմակերպել	Մասնաճյուղի և նրա կողմից իրականացվող կրթության վերա-բերյալ	ՄԿՊԿ բաժինը, ֆակուլտետի հետ համագործակցելով, ուսումնական տարվա II կիսամյակում կազմակերպում է «բաց դռների օր» և		Շարունակական գործընթաց է:

«բաց դռների օր» և ճանաչողական այց մասնաճյուղ:	իրազեկու-թյան մակարդակի բարձրացում դիմորդների շրջանում:	ճանաչողական այցեր մասնաճյուղ, որի ընթացքում ավագ դպրոցի և վարժարանի սաները ծանոթանում են ֆակուլտետի կառուցվածքին, հնարավորություններին, մասնագիտություններին, իրենց ցանկությամբ ունկնդիր են լինում տարբեր դասախոսությունների: Ընթացիկ ուստարում դա հնարավոր չեղավ կազմակերպել՝ արտակարգ դրության պատճառով:		
7.1.5 Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները տարածաշրջանում՝ հիմնելով դի-մորդների հետ տարվող աշխա-տանքների ներկա-յացուցչություններ և դրանք ապահովելով անհրաժեշտ տեղեկատվական նյութերով:	Ընդունելության ցուցանիշների աճ:	Ինչպես նախորդ տարում, այնպես էլ ընթացիկ 2020-2021 ուստարվա ընթացքում այս առումով բավական մեծ աշխատանք է կատարվել՝ շնորհիվ ՄԿՊԿ բաժնի կազմակերպած գործունեության և այս խնդրի իրականացման գործում ֆակուլտետի հետ համագործակցության: Մասնաճյուղի և գործող մասնագիտությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը տարածվել է ինչպես ԵՊՀ ԻՄ պաշտոնական կայքէջի, ֆեյսբուքյան էջի, այնպես էլ տպագրված բուկլետների միջոցով: Չնայած ցուցաբերած ջանքերին՝ ընդունելության ցուցանիշները նախորդ տարվա համեմատ		Շարունակական գործընթաց է:

		նվազել են:		
7.1.7 ԵՊՀ-ի և ԵՊՀ ԻՄ–ի դասախոս-ներին առավելագույն ս ներգրավել հանրակըր-թական ուսումնա-կան հաստատությունն-ներում ակնարկային և բովանդակային դասախոսությունների, թեմատիկ քննարկում-ների կազմակերպման գործում:	Մասնագիտական կողմնորոշման հարցում աշակերտին օժանդակություն և հետաքրքրության ձևավորում բուհի նկատմամբ:	Ինչպես արդեն վերը նշել ենք, ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը մասնագիտական կողմնորոշման համար այցելել են մարզի դպրոցներ, զրույցներ ունեցել 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտների հետ, ներկայացրել Մասնաճյուղը, նրա հնարավորությունները, տեխնոլոգիական և մասնագիտական ռեսուրսները և առաջարկվող մասնագիտությունները:		Շարունակական գործընթաց է:
7.2.1Օպտիմալացնել ընդունելության ամենամյա պլանավո-րումն ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական	Ընդունելության ամենամյա պլանավորում՝ ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական ծրագրերի:	Վերլուծելով արտաքին և ներքին միջավայրերը ընդունելության ամենամյա պլանավորում կատարելու համար՝ հաշվետու տարում կրթական ծրագրերի փոփոխություններ տեղի չեն ունեցել: Ուսուցման օպտիմալ պլանավորումից ելնելով՝ գալիք՝ 2022-2023 ուստարվա ընդունելության համար նախատեսում ենք		Շարունակական գործընթաց է:

ծրագրերի՝ ուղենիշ ունենալով արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունը:		քննարկումներ՝ կրթական ծրագրերից որևէ մեկին նախապատվություն տալու նպատակով: Այդ նպատակով ֆակուլտետը ակտիվ համագործակցում է ՄԿՊԿ բաժնի հետ:		
8.1.3 Ընդլայնել և կանոնակարգել ԵՊՀ ԻՄ-ի վճարովի ծառայությունները:	Վճարովի ծառայություններից ֆինանսական հոսքերի աճ:	Վճարովի ծառայություններ կարելի է կազմակերպել ֆակուլտետի արվեստանոցներում, քանի որ Իջևանում այդպիսի ծառայություններ առաջարկող արվեստանոցներ չեն գործում:		Հաջորդ ուստարվա ընթացքում ստեղծել պայմաններ՝ արվեստանոցները դասերից հետո նման ծառայություններ մատուցելու ուղղությամբ:
8.1.4 Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ Մասնաճյուղի և նրա առանձին ստորաբաժանումների շարունակական կապը՝ խրախուսելով նրանց կողմից բուհին ֆինանսական, նյութական և	Շրջանավարտնե-րից և այլ շահառուներից ստացվող աջակցություններ:	Շրջանավարտների և այլ շահառուների հետ ֆակուլտետի շարունակական կապն ապահովվում է հիմնականում ԱԿ բաժնի գործունեությամբ և միջնորդությամբ, որի շնորհիվ բարձր առաջադիմությամբ կամ սոցիալական աջակցության կարիք ունեցող ուսանողներ կրթաթոշակներ են ստանում:		Շարունակական գործընթաց է:

այլ բնույթի աջակ-ցության նախաձեռնու-թյունները:				
8.1.5 Ուսումնասիրել մասնաճյուղի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագործել տարաբնույթ բիզնես ծրագրեր:	Ուսանողների գործնական հմտությունների դրսևորումը, ֆինանսական որոշակի մուտքերի ապահովում:	Այս ուղղությամբ ընթացիկ ուստարում քայլեր չեն ձեռնարկվել, սակայն ուսումնական գործընթացը սովորական հունով ընթանալու պարագայում կարելի է ամբիոններում ուսումնասիրել և քննարկել կրթական ծրագրերի ընձեռած հնարավորությունները՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ ֆակուլտետների հետ՝ բիզնես պլան մշակելու և իրականացնելու համար:		Քայլեր ձեռնարկել հաջորդ ուստարվա ընթացքում:
8.3.4Կատարեա-գործել ԵՊՀ ԻՄ-ում ներքին աուդիտի համակարգը:	Ներքին աուդիտի գործող համա-կարգ:	Ինչ վերաբերում է ֆակուլտետի ներքին աուդիտին, ապա դա կատարվում է ըստ մասնաճյուղում գործող կարգերի՝ կիսամյակի կամ ուստարվա ավարտին ֆակուլտետի տարբեր կառույցների ղեկավարների կողմից տրվող հաշվետվություններով՝ իրենց ծրագրի, գործունեության և արդյունքների մասին:		Շարունակական գործընթաց է:
8.3.6 Բարձրացնել սովորողների ներ-գրավվածությա	Կառավարման մեջ ներգրավված վերապատրաստված	Մասնաճյուղի կառավարմանն ուսանողներին ծանոթացնելու և ներգրավելու նպատակով վերջին տարիներին կազմակերպվում էր		

ն արդյունավետությունը մասնաճյուղի կառավարման գործընթացներում:	սովորողների առկայություն:	ուսանողական ռեկտորատ: Համավարակի պատճառով այս ուսումնական տարում նման միջոցառումներ չեն կազմակերպվել:		
8.4.3 Բարձրացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափան-ցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողնե-րի իրազեկվա-ծության մակարդակը:	Ունենենալ գնահատման թափանցիկ գործընթաց, գնահատման համակարգի և չափանիշների վերաբերյալ իրազեկված ուսանողներ:	Ֆակուլտետում, ուսումնառության առանձնահատկություններից ելնելով, այդքան էլ մեծ դժվարություններ չեն ներկայացնում գնահատման թափանցիկությունը: Ուսանողները գնահատվում են անհատական աշխատանքների հիման վրա: Ուսանողները պարբերաբար տեղեկացվում են գնահատման կարգի վերաբերյալ, իմանում, թե ինչպես է ձևավորվում իրենց արդյունարարա գնահատականը: Այս ուստարում ևս, մինչև քննությունների մեկնարկը, ամբիոններում քննարկվեցին քննության անցկացման ձևերը և միավորների բաշխման կարգը, որի վերաբերյալ ուսանողները նախապես տեղեկացվեցին:		Շարունակական գործընթաց է:
9.2.1 Ներդնել թի-րախային օտարալեզու ուսումնական մոդուլ-ներ և	Կրթական ծրագրերում օտարալեզու մոդուլների առկա-յություն:	Այս ուղղությամբ դեռևս որևէ քայլ չի կատարվել:		

ծրագրեր:				
9.2.5 Կրթական ծրագրերի վերակառու-ցում՝ շարժունությունն ապահովելու նպատակով:	Վերակառուցված կրթական ծրագրեր:	Որակի ապահովման բաժնից չունենք բենչմարքինգի տվյալներ: Հետաքրքիր առաջարկների դեպքում կարելի է լավագույն փորձին հետևելով՝ վերակառուցել կրթական ծրագրերը:		

Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար՝ Վ. Ա. Աղաբաբյան